«ՀԱՅՈՑ ԱՐԾԻՎՆԵՐ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ»
կուսակցություն

"ARMENIAN EAGLES. UNITED ARMENIAN"
party

партия "АРМЯНСКИЕ ОРЛЫ. ЕДИНАЯ АРМЕНИЯ"

✉ ՀՀ, ք. Երևան, Երկաթուղայինների 2-րդ փ., տուն 2/3, ☎(+374 10) 43-50-34, ֆաքս (+374 10) 43-50-34, (+374 77) 81-11-11
✉ РА, г. Ереван, ул. Железнодорожников-2, дом 2/3, ☎(+374 10) 43-50-34, факс (+374 10) 43-50-34, (+374 77) 81-11-11
✉ House 2/3, Yerkatughayinery street 2, Yerevan sity, RA ☎(+374 10) 43-50-34, fax (+374 10) 43-50-34, (+374 77) 81-11-11
E-mail: HAMHK@mail.ru, hayocartsivner@mail.ru
www.hayocartsivner.am

No. 050

«*26*» *օգոստոսի* *2020 թ.*

Երևանի քաղաքապետ
Հայկ Մարությանին

1851588.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՅՏԱՄՈՒՏՈՒԹՅՈՒՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
No 20/87330 26 08 2020 թ.

Դ Ի Մ Ո Ւ Մ

Հարգելի՛ պարոն քաղաքապետ

Նորանկախ Հայաստանի պետականաշինության գործում լրջագույն ներդրում ունեցած և 15 տարիների ընթացքում շուրջ 1.500 հայրենասիրական և ռազմահայրենասիրական բնույթի միջոցառումներ կազմակերպած «Սյունյաց և Հայոց Արծիվներ» հայրենասիրական կազմակերպությունների (www.hayocartsivner.am) ավելի քան 300 մասնաճյուղերի ամուր հիմքի վրա ձևավորված «Հայոց Արծիվներ. Միասնական Հայաստան» ազգային քրիստոնյա կուսակցությունը նախատեսում է սույն թվականի սեպտեմբերի 20-ին՝ ժամը 17:00-ից մինչև 19:30-ը, Երևան քաղաքի Հանրապետության հրապարակում կազմակերպել խաղաղ հավաք (ըստ ՀՀ «Հավաքների ազատության մասին» օրենքի՝ ընդունված 2011 թվականի ապրիլի 14-ին), իսկ սույն թվականի սեպտեմբերի 20-ին՝ ժամը 19:30-ից մինչև 22:00-ն, անցկացնել խաղաղ երթ (ըստ ՀՀ «Հավաքների ազատության մասին» օրենքի՝ ընդունված 2011 թվականի ապրիլի 14-ին) Հանրապետության

հրապարակից դեպի Նալբանդյան-Թումանյան-Աբովյան փողոցներ՝ վերադարձ դեպի Հանրապետության հրապարակ երթուղիներով:

Վերոնշյալ հանրահավաքի և երթի նպատակն է՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, բնակիչներին հաղորդել հստակ տեղեկություն՝ «Հայոց Արծիվներ. Միասնական Հայաստան» կուսակցության ղեկավար կազմի՝ Նախագահության դիրքորոշման վերաբերյալ՝ կապված Հայաստանում և Հայաստանից դուրս տեղի ունեցող քաղաքական գործընթացների հետ, ինչպես նաև «Հայոց Արծիվներ. Միասնական Հայաստան» կուսակցության կողմից Հայաստանի Հանրապետության Վարչապետին և Կառավարությանը սույն թվականի փետրվարի 20-ին ներկայացրած 10 պահանջների մասին:

Վերոնշյալ հանրահավաքի և երթի ժամանակ՝

1. Յուրաքանչյուր հանրահավաքի և երթի մասնակիցների սպասվող թիվը կլինի 5000-ից ավելի:
2. Կօգտագործենք տեխնիկական սարքավորումներ և ոչ միայն (ուժեղացուցիչ (ուսիլիտել), միկրոֆոններ, բարձրախոսներ, եռագույն դրոշներ, պաստառներ):
3. Կաշխատեն լուսանկարիչներ, օպերատորներ, լրագրողներ:
4. Յուրաքանչյուր հանրահավաքի և երթի ժամանակ կլինեն նվազագույնը 20 կարգադրիչներ, ովքեր իրենց վրա կկրեն սպիտակ, տեսանելի տարբերանշաններ, որոնց վրա գրված կլինի «Կարգադրիչ»:

Նախատեսվում է նաև՝ սույն թվականի սեպտեմբերի 10-ից մինչև սեպտեմբերի 20-ը ներառյալ Երևան քաղաքի 12 վարչական շրջանների փողոցներում և բնակելի շենքերի բակերում կազմակերպել իրազեկման միջոցառումներ. շրջել մեքենաներով և մեքենաների միջից բարձրախոսներով տարածել հայտարարություն, ինչպես նաև քաղաքացիներին բաժանել տեղեկատվական փոքրիկ նյութեր (A4 չափսի գրքույկներ և, կամ A4 չափսի թղթեր)՝ սեպտեմբերի 20-ին Հանրապետության հրապարակում տեղի ունենալիք հանրահավաքի և երթի մասին:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ սույն թվականի սեպտեմբերի 20-ին կայանալիք հանրահավաքի և երթի ընթացքում պահպանելու ենք հավաքների մասին ՀՀ պարետի որոշումներն ամբողջությամբ:

Դիմում ենք Ձեզ խնդրանքով՝ օրենքի սահմաններում թույլատրել «Հայոց Արծիվներ. Միասնական Հայաստան» կուսակցության սույն թվականի սեպտեմբերի 20-ին ժամը 17:00-ից մինչև 22:00-ն,

Հանրապետության հրապարակում՝ վերոնշյալ երթուղիներով, կազմակերպել խաղաղ հանրահավաք և խաղաղ երթ. վերոնշյալ հանրահավաքն ու երթն ընդունել ի գիտություն:

Միաժամանակ խնդրում ենք ցուցաբերել միջնորդություն՝ ՀՀ Ոստիկանության Երևան քաղաքի ոստիկանության վարչության օժանդակությամբ ապահովելու հանրահավաքի և երթի անվտանգությունը:

Խնդրում ենք նաև թույլատրել և ընդունել ի գիտություն՝ սույն թվականի սեպտեմբերի 10-ից մինչև սեպտեմբերի 20-ը ներառյալ Երևան քաղաքի 12 վարչական շրջանների փողոցներում և բնակելի շենքերի բակերում կազմակերպվելիք իրազեկման միջոցառումների կայացումը:

Վերոնշյալ հանրահավաքի և երթի, Երևան քաղաքի 12 վարչական շրջանների փողոցներում և բնակելի շենքերի բակերում անցկացվելիք իրազեկման միջոցառումների կազմակերպիչներն ու ղեկավարներն են.

Հ/Հ	Անուն Ազգանուն Հայրանուն	Անձնագիր	Հեռախոսահամար	Էլ.հասցե	Փոստային հասցե
1.	Եդգար Ավետիսյան Սմբաթի	044 AT0368895	098811101	hayocartsivner@mail.ru	ՀՀ, ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Երկաթուղայինների 2 փ., տուն 2/3
2.	Սամսոն Ջիրոյան Մամիկոնի	001 AS0206796	098999971	hayocartsivner@mail.ru	ՀՀ, ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Երկաթուղայինների 2 փ., տուն 2/3
3.	Կյուրեղ Արամայիսի Ավագյան	044 AR0486773	098600101	hayocartsivner@mail.ru	ՀՀ, ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Երկաթուղայինների 2 փ., տուն 2/3
4.	Խաչիկ Ասրյան Մայիսի	010 AS0581111	098811111	hayocartsivner@mail.ru	ՀՀ, ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Երկաթուղայինների 2 փ., տուն 2/3

Կից ներկայացնում ենք «Հայոց Արծիվներ. Միասնական Հայաստան» կուսակցության ղեկավար կազմի՝ Նախագահության որոշումը՝ վերոնշյալ հանրահավաքի և երթի մասին:

Կուսակցության Նախագահ՝ Խաչիկ Մայիսի Ասրյան